“Freakonomics”-ի ամփոփում: Տարօրինակագիտութիւն
Թեմաներն ու սկզբունքային գաղափարները:

Թէեւ հեղինակները նշում են, որ գիրքը որեւէ կոնկրետ թեմայի շուրջ չի ծաւալուել, մենք անդրադարձել ենք մի քանի գաղափարների, որոնք յաճախակի են հանդիպում ողջ գրքում:

Բացարձակն ընդդէմ նորմատիւ վերլուծութեան

Գրքի պատմութիւններից մեծ մասը մարտահրաւէր է նետում ընթերցողի մինչ այդ եղած համոզմունքներին, այսինքն՝ սովորական իմաստութիւններին: Գրքի իւրաքանչիւր գլխում շարադրուած զանազան հետազօտութիւնների եզրակացութիւնները ձեզ յաճախ կը զարմացնեն: Դրանք նոյնիսկ կարող են գրգռել ձեր զգայութիւնները:

Այդ գլուխներում շարադրուած հետազօտութիւնները գուցէ նման չեն այլ քանակական կողմնորոշում ունեցող գրքերի, եւ կարող են համոզիչ ձեւով ներկայացնել բարոյական մարդու եւ գիտնականի աշխարհայեացքների տարբերութիւնները:

Եթէ բարոյագիտութիւնը ներկայացնում է այն ճանապարհը, որով մարդիկ կը ցանկանային տէսնել աշխարհը աշխատանքի պրոցեսում (գործընթացում), ապայ տնտեսագիտութիւնը ներկայացնում է, թէ իրականում ինչպէս է այն աշխատում:

Ինչպէս նշում են հեղինակները. “Շատ լաւ է կարծիք կազմել եւ տեսութիւներ մշակել ինչ-որ բանի մասին, քանի որ մարդկութիւնն է դա ուզում, բայց երբ ձեւական բարոյականութիւնը փոխարինւում է փաստերի անկեղծ գնահատականով, արդիւնքը յաճախ նոր եւ զարմանալի հասկացութիւն է լինում”:

Գիտական հետազօտութեան էութիւնը

Տարօրինակագիտութիւնը գիտական գործընթացում նոր հասկացութիւններ է ներմուծում: Տարօրինակագիտութեան հետազօտութիւնները ուղղուած են տնտեսական եւ սոցիալական խնդիրներին, որոնց քանակական վերլուծութիւնը սովորաբար շատ դժուար է թւում, բայց ոչ անհնար:

Փորձարկուող վարկածների ձեւակերպման միջոցները, օգտակար տուեալներ հաւաքելու հետ կապուած դժուարութիւններն ու այդ տուեալների օգտագործումը իրական գիտական հետազօտութեան, կարգապահութեան եւ ստեղծագործ, մտաւոր գործունէութեան արդիւնք են:

S++ը կոնկրետ ներկայացնում է (պատկերացում է տալիս), որ տուեալներ հաւաքելու ոչ աւանդական մեթոդներն ու դրանք ուսումնասիրելու գլխիվայր շուռ տուած եղանակներն անհրաժեշտ են աշխարհը հասկանալու համար:

Գիտենալով, թէ "ինչ" եւ "ինչպէս" պէտք է չափել, աշխարհն առաւել քիչ խաճուած կը դարձնի:

Դրդապատճառը ժամանակակից կեանքի հիմնաքարն է:

Իսկապէս, դրդապատճառները մարդկութեան գոյատեւման հիմնաքարերն են: Տնտեսագիտութիւնը մարդկութեան վարքագծի ուսումնասիրումն է, ինչպէս դա երեւում է դրդապատճառների մշուշում: Դրդապատճառների ընկալումը ցանկացած մարդկային վարքագիծի յստակ ըմբռնման բանալին է:

Ընդունուած ըմբռնումները յաճախ սխալ են

Տարօրինակագիտութիւնը յաճոյք է ստանում տնտեսական հետազօտութիւնների զօրեղ քանակական գործիքներն օգտագործելով ընդունուած ըմբռնումները գլխիվայր շուռ տալուց:

Հեղինակները չեն պնդում, որ ընդունուած ըմբռնումները միշտ են սխալ, բայց նրանք իսկապէս եզրակացնում են, որ բազմաթիւ սոցիալական խնդիրներ բացատրելու համար օգտագործուող աւանդական իմաստութիւնը վատ է ուսումնասիրուած, անառարկելի է եւ յաճախ էլ սխալ:
Աննկատ, հեռաւոր պատճառները կարող են ունենալ ահռելի հետեւանքներ:

Ինչպէս հաղորդում են հեղինակները. "տրուած հանելուկի պատասխանը միշտ չէ, որ ձեր առջեւում է": Ի հարկէ, դրական տնտեսական հետազօտութիւնը եւ անյարմար սոցիալական հանելուկները լուծելու համար անհրաժեշտ տուեալների հայտնաբերումն ու բացատրումը յաճախ բարդ են: Սակայն հէնց այդ բարդ կողմն է, որ նրան ուշադրութեան արժանի է դարձնում: Եթէ հեշտ լինէր, ցանկացած մարդ կ՛անէր: